

Վերակառուցման հայրը նկատուող Գոր-
բաչովի իսկ ստեղծած ներքին գործոց
նախարարության յատուկ ջոկատները, ո-
րոնք այնքան նման են Օսմանեան կայս-
րության ենիչլիքներուն եւ գերմանական
SS-ականներուն, աղբրեջանական ՕՍՈՆ-
ականներու հետ սերտ համերաշխութեամբ,
հուրի եւ սուրի կը մատենն հայ ազգաբը-
նակչութիւնը Գետաշէնի մէջ:

Այժմ, նոյն ճակատագիրին ենթակայ
են, մինչեւ 30-ական թուականները Լեռ-
նային Արցախի մաս կազմած եւ ապա
յետագային դաւադրաբար անկէ անջատ-
ւած Մարտունաշէնն ու Շահումեանը: Ան-
զէն եւ անպաշտպան հայ բնակչութեան
դէմ կը կիրարկուի ցեղասպանութեան նոր
տեսակ մը, որուն անպատիժ նմանօրինակ-
ները հանդիսացան Սումգայիթի եւ Բաքուի
ջարդերը:

Աղբրեջանական զինեալներուն եւ ներ-

քիւնը՝ լուծելու «ներքին» այդ հարցը:
Կեդրոնական հրամանին ենթակայ զօրա-
միաւորները կը մասնակցին շագանակը
կրակէն հանելու:

Հայաստանի Հանրապետութեան կողմ
կատարուած որեւէ դիմում կամ բողոք,
այլեւս կը հանդիպի խուլ ականջներու,
որովհետեւ դարձեալ, ըստ այդ գաղտնի
համաձայնութեան, միութեանական դաշնա-
ցիրը շատորագրող հանրապետութիւններու
հետ յարաբերութիւնները պիտի ըլլան այն-
պէս, ինչպէս օտար պետութիւններու հետ:

Հարց կրնայ ծագիլ, թէ ո՞րքանով ճիշդ
է գաղտնի այս համաձայնութիւնը: Պահ
մը թէկուզ կասկածի տակ առնելով այդ
համաձայնագիրին բովանդակութիւնը,
ի՞նչպէս կարելի է բացատրել, տակաւին
նոյն համակարգին մէջ գտնուող երկու
հանրապետութիւններու հանդէպ կեդրոնա-
կան իշխանութեան կողմնակալ դիրքորո-

ՊԵՏԱԿԱՆ ԱՅԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ

քին գործոց նախարարութեան յատուկ ջո-
կատներուն դաւադիր այս գործողութեան
կը զուգահիշէին Հայաստանի սահմաննե-
րու ամբողջ երկայնքին հրահրուած գնդա-
կոծումները Լոյսնքերեանէն մինչեւ Ղա-
փան, Գորիս եւ Երասխաւան:

Աղբրեջանի նախագահ Այազ Մուրալի-
բովի կողմէ կեդրոնական հեռուստացոյցի
վրայ կատարուած սպառնալիքները՝ Հա-
յաստանի դէմ, այլեւս մէկ կասկած կը
թողուն, որ այս սենարիոն համակարգ-
ւած էր Կեդրոնին հետ, միութեանական դա-
շնագիրը շատորագրող «ըմբոստ» հանրա-
պետութեան անկախութիւնը ճգմելու հա-
մար:

Այազ Մուրալիբով ստացած էր կանաչ
լոյսը, իր ուզածը տնօրինելու իր երկրի
սահմաններուն մէջ: Այս մասին քաւակա-
նին լոյս կը սփռէ ապրիլ 23-ին, Նովո Օ-
գարետ քաղաքին մէջ կայացած գաղտնի
հանդիպումը Գորբաչովի եւ մարտ 17-ի
միութեանական հանրաքուէն կատարած 9
հանրապետութիւններու ղեկավարներուն
միջեւ:

Սովետական «Կոմքոմսանտ» շարաքա-
թերթին հաւաստի տեղեկութեանց համա-
ձայն, ապրիլ 23-ի այդ հանդիպման ըն-
թացքին կնքուած է գաղտնի «մեմորան-
տում» մը, Գորբաչովի եւ Ռուսաստանի,
Ուկրաինայ, Բելոռուսիայ, Ղազախստանի,
Աղբրեջանի, Ուզբեկստանի, Կիրգիզիայ,
Քիւրքմնիստանի եւ Տաջիկստանի ղեկավար-
ներուն միջեւ: Հակառակ անոր, որ ժողովի
մասնակիցները համատեղ յայտարարութիւն
մը կատարեցին, սակայն «Կոմքոմսանտ»-ի
համաձայն, երկրորդ, այլ «գաղտնի» հա-
մաձայնութիւն մը կնքուած է, ուր Գորբա-
չով կատարած է մեծ զիջումներ, որոնք
գործադրելի են անմիջապէս:

Գորբաչով ընդունած է հանրապետական
օրէնսդրութեան գերակայութիւնը՝ միութե-
նական օրէնսդրութեան վրայ, յատկապէս
«հանրապետութիւններու ներքին հարցերու
կապակցութեամբ»:

Աւելին: Գորբաչով ընդունած է, որ Մի-
ութեան հանրապետութիւնները ըլլան ինք-
նիշխան պետութիւններ եւ «հաւաստիացու-
ցած է Կեդրոնին շփոթամտութիւնը անտնց
ներքին հարցերուն», այլեւ խոստացած է
յարգել հանրապետական իշխանութիւնը:

Բնականոն պայմաններու տակ, ծիծա-
ղելի է նոյնիսկ տարրական այս իրա-
ւունքները նկատել «զիջումներ»: Սակայն,
նայած թե ո՞վ եւ ի՞նչպէս կը գործածէ
իր «ներքին հարցերը» տնօրինելու... ա-
զատութիւնը:

Սահմանադրական գետնի վրայ, Աղբը-
րեջանի մաս կը կազմեն Գետաշէնն ու
Մարտունաշէնը եւ Շահումեանի շրջանը:
Աղբրեջանական «ներքին» հարց մըն է
այս եւ Կեդրոնը իրաւունք չունի միջամը-
տելու առանց «ինքնիշխան» այդ հանրա-
պետութեան համաձայնութեան: Ընդհակա-
ռակը: «Ինքնիշխան» հանրապետութիւնը
ինքն է որ կը խնդրէ ներքին գործոց նա-
խարարութեան ենթակայութեան տակ
գտնուող յատուկ ջոկատներու աշակցու-

շումը: Անսահմանափակ իշխանութեամբ
օժտուած նախագահ մը ի վիճակի չէ՝
կասեցնելու արինահեղութիւնը, փոխանակ
մեղսակից լուծեամբ քաջալերելու մարդ-
կային իրաւունքներու այս բռնաբարու-
թիւնը:

Կեդրոնական իշխանութիւնները փաստօ-
րէն փորձաքարի կ'ենթարկեն Հայաստանի
քաղաքական դիմադրականութիւնը... Գե-
տաշէնի, Մարտունաշէնի եւ Շահումեանի
շրջանին մէջ: Ըսել կ'ուզեն - կամ կը
վերադառնաք եւ կամ կը սանձագերծենք
աղբրեջանական արիւնտ ձեռքը: Իսկ
Հայաստանի սահմանային շրջաններու
վրայ գնդակոծումները ազդարարագիր մըն
են գալիք աւելի մեծ փորձութիւններու:

Մարալիի այս քաղաքականութիւնը, ե-
թէ կեդրոնական իշխանութեան կողմէ կը
կիրարկուի վերջ դնելու Հայաստանի ան-
կախութեան գործընթացին, Աղբրեջանի
կողմէ լաւագոյնս կը շահագործուի վեր-
ջին հարուած մը տալու Արցախի խնդիրին:

Գետաշէնի, Մարտունաշէնի եւ Շահումե-
անի անկումը անպայմանօրէն չի նշանա-
կեր Արցախի անկումը: Սակայն կը նշա-
նակէ, որ ճամփան հարթուած է Արցախի
նուաճման՝ Աղբրեջանի կողմէ: Կը նշանա-
կէ նաեւ, աղբրեջանական հեռակայ հա-
շիւներով Զանգեզուրի ալ նուաճումը:

Անա ճիշդ այդ սպառնալիքն է, որ կը
դիմագրուէ Հայաստանը: Հայաստանի բո-
լոր սահմաններուն վրայ ռազմաճակատ-
ներ քանալով, Կեդրոնին եւ Աղբրեջանի
նպատակն է, ինչպէս կ'ըսէ Հայաստանի
Հանրապետութեան յայտարարութիւնը, Հա-
յաստանը ներքաշել պատերազմի մէջ,
պատերազմ մը՝ որուն արդիւնքը կրնայ
ըլլալ միմիայն օրինական իշխանութեան
անկումը «պետական ահաբեկչական»
քաղաքականութեան հետեւանքով:

Օրհասական այս օրերուն, նժարի մէջ
է մեր ֆիզիքական գոյութիւնը: Հայաստա-
նի ժողովուրդին պարտականութիւնն է բո-
լորովի հայրենի օրինական իշխանութեան
շուրջ եւ ենթարկուիլ արտակարգ իրավի-
ճակի պետական յանձնաժողովի հրա-
հանգներուն, խուսափելով երկրին միա-
նականութիւնը խախտող որեւէ արկածա-
խնդրութենէ, արտասահմանի ամբողջ հա-
յութիւնը պետք է ցուցաբերէ նոյնպիսի մի-
ասնականութիւն մը եւ իր քայլերը համա-
կարգէ հայրենի իշխանութեան քայլերուն
հետ: Մեզի կը մնայ, արտասահմանի քա-
րոզչական մեքենան լծել գործի, լորիինգ-
ներով, հաւաքներով, բողոքի նամակներով
եւ աշխարհի ուշադրութեան յանձնել
մարդկային իրաւունքներու ոտնահարումնե-
րը:

Սովետական Միութիւնը կրնայ տեղի
տալ միմիայն արտաքին աշխարհի ճնշու-
մին առջեւ: Կրնա՞նք ստեղծել ճնշումի
այդ մթնոլորտը: Անա՞ մեր առջեւ գտնուող
մարտահրաւիրը: